ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց, թիվ 48, Հեռ. 060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
11 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 47

<<ԴԱՄԱԼԱ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ , ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 50-Ն որոշման պահանջներով , ինչպես նաև հիմք ընդունելով <<Դամալա Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝**որոշում եմ.**

1. <<Դամալա Գրուպ>> ՍՊԸ -ին տրամադրել համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման, ինչպես նաև ոգելից և ալկոլոհային խմիչքների և ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվություն 2019 թվականի 1-ին եռամսյակի համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

20 19թ. փետրվարի 11
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48 , Հեռ. 060517670, էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 48

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ (ՀՐԱԺԵՇՏԻ) ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ (ԿԱՄ) ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» օրենքի 8.1-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետով և հաշվի առնելով «ԱՐՄԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆ ԱԲՐՈՍԻՄԻ» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը, ***որոշում եմ.***

1. « ԱՐՄԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆ ԱԲՐՈՍԻՄԻ» ԱՁ-ին 2019 թվականի օրացուցային տարվա համար տալ քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվություն գ.Վերին Պտղնի Սևան –Երևան մայրուղի թիվ 24 հասցեում գտնվող տարածքում:

2. Պարտավորեցնել « ԱՐՄԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆ ԱԲՐՈՍԻՄԻ » ԱՁ-ին, , գ.Վերին Պտղնի Սևան–Երևան մայրուղի թիվ 24 հասցեում գտնվող տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնել և (կամ) մատուցել Վերին Պտղնի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 50-Ն որոշման պահանջներին համապատասխան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

20 19 թ.փետրվարի 14
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի,2-րդ փողոց թիվ 48,հեռ. 060517670, էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 49

<< ՍԵՐԳԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ>> ԱՁ-ԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ, ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 50-Ն որոշման պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով << Սերգեյ Սարգսյան >> ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. <<Սերգեյ Սարգսյան>> ԱՁ-ին տրամադրել հանրային սննդի կազմակերպման և իրացման, ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի իրացման թույլտվություն՝ 2019 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

20 19 թ. փետրվարի 14_
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 50

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՐԻՍՊԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ,ԴՐԱՆՑ ԵՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22.1 կետերի պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացի Արտակ Աբգարյանի դիմումը, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ շինությունը կառուցվել է ինքնակամ կառույցի և պարիսպի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման պահանջներով, ինչպես նաև՝ Վերին Պտղնի համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 13-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի /բնակավայրերի/պարզեցված գլխավոր հատակագիծը հաստատելու մասին>> թիվ 4-Ա որոշումը, 2011 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 2009256 սեփականության իրավունքի գրանցման վկայականը՝ ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Արտակ Աբգարյանին սեփականության իրավունքով պատկանող, Վերին Պտղնի Նորավան թաղամասի 1-ին փողոց թիվ 65/1 հասցեում գտնվող տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունը՝ 100.5 քմ բնակելի տունը և 4.4 քմ պարիսպը համարել օրինական:

2. Սահմանել,որ հողամասի սեփականտերը

1) Որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Վերին Պտղնի համայնքի բյուջեի N 900105231212 հաշվեհամարին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 545480 / հինգ հարյուր քառասունհինգ հազար չորս հարյուր ութսուն / ՀՀ դրամ օրինականացման վճարը:

2.) Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Քաղաքացի Արտակ Աբգարյանին սեփականության իրավունքով պատկանող 07-062-0204-0020 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման 0.0737 հա հողամասի և դրա վրա առկա 100.5 քմ շինությունի՝ բնակելի տան և 4.4 քմ պարիսպի գործառնական նշանակությունը համարել փոփոխված հասարակական կառուցապատման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

20 19թ. փետրվարի14
գ.Վերին Պտղնի